Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց
Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

Առարկան՝ մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Արգինե Կիրակոսյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ, քաղաք Արտաշատ Արարատ Գոլեցյանի անվան Հ1 հիմնական դպրոց

2023

Բովանդակություն

Ներածություն……..

1. Հայոց լեզվի մեթոդիկան որպես գիտություն

2. Մայրենի լեզվի տարրական դասընթացի խնդիրները

Բաժին 1.Գրաճանաչության մեթոդիկա

1. Գրաճանաչության մեթոդները հայ դպրոցում……

2. Գրաճանաչության ժամանակակից մեթոդները ……

3. Դպրոց ընդունվող երեխայի ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները

4. Կարդալու և գրելու նախնական կարությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունները ……

Բաժին 2. Ընթերցանության մեթոդիկա

1. Ընթերցանության խնդիրները ու նպատակները տարրական դպրոցում……

2. Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը՝ ……

ա. Զրույց

բ. Բնագրի ընթերցում

գ. Բառային աշխատանք

դ. Ընթերցած նյութի բովանդակության վերարտադրում կամ պատմում

ե. Ամփոփում

Բաժին 3. Քերականության մեթոդիկա

1. Քերականական գիտելիքների յուրացման գործընթացի առանձնահատկությունները տարրական դասարաններում ……

2. Քերականության տեղն ու դերը հայոց լեզվի տարրական ուսուցման համակարգում ……

3.Լեզվական վարժությունների համակարգը ……

Ներածություն

1. Հայոց լեզվի մեթոդիկան որպես գիտություն

Հայոց լեզվի մեթոդիկան մանկավարժական, ավելի կոնկրետ՝ կիրառական գիտություն է: Հիմք ընդունելով մանկավարժական տեսությունն ու պրակտիկան, երեխաների տարիքային հոգեբանությունն ու կազմաբնախոսական առանձնահատկությունները, ժամանակակից հայոց լեզվի օրինաչափություններն ու կրթության փիլիսոփայությունը՝ մեթոդիկան առաջարկում է երեք խնդիրների լուծման ուղիներ.

- Ի՞նչ սովորեցնել,
- Ինչպե՞ս սովորեցնել,
- Ինչո՞ւ հենց այդպես և ոչ մեկ այլ կերպ սովորեցնել:

Ի՞նչ սովորեցնել հարցի պատասխանը հայոց լեզու առարկայի ուսուման բովանդակությունն է, որը որոշվում է պետության կողմից հաստատված ծրագրով և դրա հիման վրա ստեղծված դասագրքերով:

Ինչպե՞ս սովորեցնել խնդիրը լուծելու համար դիտարկվում են մանկավարժության մեջ ընդունված ուսուցման ընդհանուր՝ ավանդական մեթոդները, եղանակները, հնարները վարժությունների համակարգերը, որոնց հիման վրա նշանակված են այդ մեթոդների կիրառման ուղիներ, կիրառական առաջադրանքներ, առանձին դասեր, ինչպես նաև ժամանակակից մեթոդական այն հնարքները, մոտեցումները, որոնք այսօր մտել են դպրոց և հաջողությամբ կիրառվում են ուսումնական գործընթացում:

Ինչո՞ւ հենց այդպես և ոչ մեկ այլ կերպ սովորեցնելը կարևորվում է, որովհետև ուսուցման գործընթացում յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցորեն կատարի իր քայլերը՝ համոզված, որ ինքը ճիշտ ուղու վրա է:

2. Մայրենի լեզվի տարրական դասընթացի խնդիրները

Այսօր անառարկելիորեն ընդունվում է այն դիրքորոշումը, որ տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ. Գիտելիքն ուսուցման այս փուլում դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ տարրական դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների

մեծ ծավալի հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ծավալման և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանիությունը:

Բաժին 1.

Գրաճանաչության մեթոդիկա

1.Գրաճանաչության մեթոդները հայ դպրոցում

Ներկայացնենք հայ դպրոցում պատմականորեն գործածված գրաճանաչության մեթոդները:

Հնչական կամ պատմական մեթոդի հիմնադիրը Մեսրոպ Մաշտոցն է: << Հայոց գիրը ոչ թե պատկերագրություն կամ նկարադրոշմ գրություն է, այլ հնչյունային նշան: Յուրաքանչյուր ձայն յուր սեփական նշանն է ստացել: Սկզբներում մեր այբուբենը մեծ կատարելություն պիտի ունենար այնպես որ, այն ժամանակ գրության համար միայն մի կանոն կարող էր լիներ. գրիր, ինչպես որ հնչում ես>>:

Գրաճանաչության վանկային մեթոդի գործածությունը բավականին պարզեցրեց գրաճանաչության գործընթացը: Այս մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս իբրև կարդալու ամենափոքր միավոր ընդունվում էր վանկը: Այբբենարաններում օգտագործվում էր վանկերի նշման իմ քանի եղանակ՝ բառի վանկերը գրվում էին իրարից անջատ, փոքրիկ գծիկով բաժանված կամ ամբողջական՝ օգտագործելով աղեղանման գծեր: Սակայն մաքուր վանկային մեթոդով կարդալ սովորեցնելը սխալ է. այն խոչընդոտում է հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

1. Գրաճանաչության ժամանակակից մեթոդները

Այսօր գործում են գրաճանաչության ժամանակակից՝ վերլուծական-համադրական հնչյունավանկային և վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդները, որոնք կիրառվել են և կիրառվում են նաև ռուսական մեթոդիկայում և հենվում են հայ և

համաշխարհային դպրոցի գրաճանաչության կազմակերպման պրակտիկայով արդարացված այլ մեթոդների առանձին տարրերի վրա:

Այս մեթոդները կոչվում են վերլուծական-համադրական, որովհետև երկուսի դեպքում էլ հնչյունային վերուծությունը նախորդում է համադրման փուլին, սակայն երկու փուլերը սերտորեն կապված են, որովհետև նոր հնչյունի ուսումնասիրությունն իրականացվում է բառի շուրջ տարվող վերլուծական և համարդական աշխատանքի միջոցով.հնչյուն-տառի ուսուցումը սկսվում է բառի <<քայքայումից>> մինչև հնչյուն (վերլուծություն), այնուհետև բառի կազմի մեջ մտնող բոլոր հնչյունները համաձուլվում են (համադրություն) բառն ամբողջական կարդալու համար: Հնչյուն-տառի ուսուցումն ընթանում է հնչյունից տառը գնացող ուղիով:

3.Դպրոց ընդունվող երեխայի ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները

Մանկավարժահոգեբանական տեսանկյունով ուսումնական գործունեությունը ճիշտ և անցավ կազմակերպելու, դպրոցականների համար ուսումնական արդյունավետ պայմաններ ստեղծելու համար նախ անհրաժեշտ է ուսումնական տարվա սկզբին իրականացնել ախտորոշում՝ պահպանելով հետևյալ սկզբունքները.

1. Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի սովորելու այն ուսումնական հաստատությունում, որը համապատասխանում է մտավոր, ֆիզիկական և հոգեկան զարգացման առանձնահատկություններին:

2. Հոգեկան, մտավոր զարգացման մակարդակները կարող են գործունեության տարբեր ձևերի ժամանակ (խաղ, ուսում, աշխատանք) հղկվել, շտկվել, զարգանալ, եթե դրա համար կան նպաստավոր պայմաններ:

3. Երեխայի մտավոր և հոգեկան զարգացման վիճակի ախտորոշումը դպրոց ընդունվելու պահին պարտադիր է, և նրա արդյունքները՝ համապատասխան երաշխավորություններով, պիտի ներկայացվեն ծնողներին:

Դպրոց ընդունվող երեխան պետք է ունենա.

1.Կազմաբնախոսական զարգացման ՝ տվյալ տարիքին ներկայացվող չափանիշները բավարարող մակարդակ

- Կրթության օրենքով նախատեսված անձնագրային որոշակի տաքիք

- Ֆիզիկական զարգացման՝ բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան մակարդակ
- Տվյալ տարիքին համապատասխան կենսաբանական զարգացման որոշակի մակարդակ (առողջական վիճակը՝ տվյալ պահին կրած ծանր հիվանդությունները, բժշկասոցիոմետրիկ չափերը և այլն):

2.Հոգեֆիզիոլոգիական զարգացման որոշակի մակարդակ

- Բարձրագույն նյարդային համակարգի զարգացման բավարար աստիճան
- Հուզակամային ոլորտի՝ իր տարիքին համապատասխան դրական բնութագիր
- կոնկրետ և վերացական մտածողության որոշակի մակարդակի առկայություն, դրանց ճիշտ հարաբերակցություն:

2. Ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ որոշակի կարողությունների զարգացման բավարար մակարդակ
    - Ուսումնական գործունեության նոր պայմաններին հարմարվելու, ըստ այն պահանջների և հրահանգների գործելու ունակություն, որոնք չեն հակասում նրա հնարավորություններին ու պահանջմունքներին,
    - Իր տարեկիցների հետ հաղորդակցվելու, համագործակցելու և համակեցության կանոնները պահպանելու որոշակի ունակություններ,
    - Ուսուցչի տված հանձնարարությունը հասկանալու և այն կատարելիս ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ
    - Մատների նուրբ շարժումների ներդաշնակ և բավարար զարգացման մակարդակ:
    -

3. Կարդալու և գրելու նախնական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունները

Հայտնի է, որ կարդալու կարողությունը իր մեջ ներառում է խոսքային միավորի տեսողական պատկերի՝ բառ, բառակապակցություն, նախադասություն և նրա լսախոսքաշարժողական կառույցի հարաբերակցությունը: Այդ գործընթացի եռամիասնությունը պահպանվում է կարդալու բոլոր տեսակների ժամանակ՝ ընթերցանությունը բարձրաձայն է, թե մտքում:

Բարձրաձայն կարդալն է օգնում սկսնակ ընթեցողին իմաստավորել, ճանաչել տառային սիմվոլները, հմտանալ դրանք վերարտադրման մեջ:

Կարդալու հմտությունները ձևավորվում են երեք փուլով՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված:

Առաջին՝ վերլուծական փուլում սկսնակ ընթերցողի տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը, որովհետև այս փուլում նրա տեսադաշտը սահմանափակ է, և կարդացածի հասկացումը հետ է մնում նրա արտաբերումից, քանի որ մի վանկը մյուսին միացնելու, բառը կարդալու համար երեխային մեծ ժամանակ է պահանջվում:

Երրորդ՝ համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը, և շարունակվում է զարգանալ գուշակման գործընթացը՝ դառնալով ավելի կատարյալ:

Ավտոմատացված կարդալու փուլում երեխաներն ընթերցում են ամբողջական նախադասություններով, բնագրի որոշակի հատվածը տեսողությամբ ընդգրկվում է և իմաստավորվում ավելի արագ: Այս փուլում աշակերտները սահուն կարդում են:

Բաժին 2. Ընթերցանության մեթոդիկա

1. Ընթերցանության խնդիրները ու նպատակները տարրական դպրոցում

Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման նպատակն է

- Ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները
- Մաքրել, հղկել, հարստացնել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը, ձևավորել կապակցված խոսք կառուցելու ունակություն
- Ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ
- Ապահովել մայրենի լեզվի տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններ

- Գեղարվեստական նյութերի ընթերցման, լեղվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, վերուծական և քննադատական մտածողություն
- Ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրակացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը:

2. Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը

Տարրական դպրոցում մայրենի լեզվի դասերը կազմակերում են բացատրական ընթերցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի և միջոցների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է:

Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերն են՝

ա. Զրույց

բ. Բնագրի ընթերցում

գ. Բառային աշխատանք

դ. Ընթերցած նյութի բովանդակության վերարտադրում կամ պատմում

ե. Ամփոփում

ա. Զրույց: Զրույցի տեսակներն կազմակերպման մեթոդները

Զրույցը բանավոր երկխոսության ձև է, որի ժամանակ՝

- Ճշտվում են կտրսեր դպրոցականների ուսումնահաղորդակցական գործունեության դրդապատճառները
- Դասարանը կենտրոնանում է ուսուցանվող թեմայի հիմանական ուղղությունների վրա
- Աշակերտները նոր տեղեկատվություն են ձեռք բերում զրույցի թեմայից
- Ստեղծվում են երեխաների հաղորդակցական կարողությունները բավարարող պայմաններ
- Ձևավորվում են գործնական և ընկերական բարեկիրթ փոխհարաբերություններ
- Ներկայացվում է ուսումնական խնդիրը

Ըստ նպատակների՝ կարելի է տարբերել զրույցի հետևյալ տեսակները

- Տեղեկատվական զրույց
- Ներգործող զրույց
- Համոզող զրույց
- Իրադրությունային զրույց

բ. Բնագրի ընթերցում: Կարդալու տարրական կարողությունների ձևավորումը

Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է: ՈՒսումնական այբբենական շրջանում երեխաների մեջ ձևավորվում են կարդալու նախնական կարողություններ:Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տողն ընթերցելիս հմուտ ընթերցողի աչքերը կատարում են 3-6 կանգառ, որոնց ժամանակ տեղի է ունենում կարդացածի գիտակցում:

Կարդալու որակական հատկանիշներն են՝

- Ճիշտ կամ անսխալ կարդալ
- Հասկանալով կամ գիտակցելով կարդալ
- Վարժ կամ սահուն կարդալ
- Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ
- Արագ կարդալ:

գ. Բառային աշխատանք

Բառը լեզվի կարևորագույն միավոր է, առարկայի, երևույթի հասկացության, զգացմունքների և այլ արժեքների իմաստակիր: Հայտնի է՝ որքան հարուստ է մարդու բառապաշարը, այնքան ընդարձակ են նրա՝ իր մտքերը տրամաբանված, հիմնավոր, ճշգրիտ և արտահայտիչ ներկայանալու հնարավորությունները:

Տարրական դասարաններում բառային աշխատանքը պետք է իրականացնել գործնականորեն, այսինքն՝ առանց տեսական գիտելիքների ու սահմանումների՝ հենվելով դասագրքում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա: Բառային աշխատանքի նպատակն է՝ անծանոթ բառերի ու դարձվածների բացատրությունը, ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների

ընտրությունը, ծանոթ արմատներով նոր բառերի կազմումը, դրանց յուրացումն ու ակտիվացումը:

Անծանոթ բառերն ու դարձվածները կարելի է բացատրել՝ ծանոթ բառերի ու բառակապակցությունների կամ հասկացությունների հետ համեմատելով ու հակադրելով:

Խոսքի մեջ օգտագործվող բառերի քանակը, այսինքն՝ ակտիվ բառապաշարը, սովորաբար ավելի սահմանափակ է լինում, քան պասիվը: Բառային աշխատանքի հիմնական դերը, վերջին հաշվով, յուրացրած բառերի առավելագույն ակտիվացումն է, խոսքում դրանց ճիշտ և տեղին օգտագործումը:

Բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանք տանելիս անհրաժեշտ է հետամուտ լինել, որ երեխաները խոսքում օգտագործեն ածականներ, մակբայներ, կապեր և ամենակարևորը գործածեն ճիշտ, տեղին և դիպուկ:

դ. Ընթերցած նյութի բովանդակության վերարտադրում կամ պատմում

Պատմելու ուսուցումը բավականին բարդ գործընթաց է և մայրենի լեզվի դասի կարևոր փուլ: Երեխաներին պատմել հանձնարարելուց առաջ անհրաժեշտ է հարցերի միջոցով նրանց նախապատրաստել պատմելուն: Այս փուլի շրջանցումը կամ թերի կատարումը բերում է նրան, որ երեխաները բնագիրը սովորում են ոչ թե պատմել, այլ վերարտադրում են անգիր:

Պատմելուն նախորդող հարցերը պետք է նախապատրաստել այնպես, որ դրանք ոչ միայն նպաստեն ստեղծագործության մանրամասն վերարտադրմանը, այլև գլխավոր միտքը որոշելուն, գործող անձերի վարքը վերլուծելուն և դեպքերի պատճառահետևանքային կապերը ճշտելուն: Այս աշխատանքը սովորողների մեջ մշակում է վերլուծելու, համադրելու, հակադրելու և դատողություններ անելու կարողություններ, որոնք չափազանց կարևոր են հետագա ուսումնական գործունեության համար:

Պատմելու տեսակները և դրանց ուսուցման մեթոդիկան

Տարրական դասարաններում եզակի դասեր են իրականացվում առանց կարդացածը վերարտադրելու: Տարբեր ձևերով պատմելը, ինչպես նաև դրանց նախապատրաստվելը դասը դարձնում են բազմաբնույթ և նպաստում են աշակերտների խոսքի զարգացմանը: Պատմելու հիմնական տեսակներն են՝

- Մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել
- Համառոտ պատմել
- Ընտրովի պատմել
- Դատողություններով կամ մեկնաբանելով պատմել
- Ձևափոխված պատմել
- Ստեղծագործաբար պատմել
- Շարունակելով պատմել
- Պատմել որպես մասնակից
- Պատմել որպես ականատես

ե. Ամփոփում

Դասարանում ուսումնասիրվող յուրաքանչյուր ստեղծագործություն, թեմա կամ լեզվական նյութ պետք է ամփոփվի: Ամփոփվում է նաև յուրաքանչյուր դասի 45 րոպի ընթացքում երեխաների կատարած աշխատանքը: Մասնավորապես պետք է ամփոփել.

- Նյութի ուսումնասիրությունից ստացած ճանաչողական նոր տեղեկությունները աշակերտների կողմից դրանց նորովի մեկնաբանման ու կիրառման ունակությունները
- Նյութերից բխող դաստիարակչաբարոյական հետևություններ անելու ունակությունը
- Նյութի լեզուն և ոճը՝ բառերը, դարձվածները, արտահայտություններն ու լեզվական այն ձևերը, որոնք ուսուցման օբյեկտ են դարձել
- Դրանց նորովի մեկնաբանման ու կիրառման ուղղությամբ երեխաների ձեռք բերած ունակությունները

Ամփոփումը հիմնականում իրականացվում է հարցերի միջոցով: Հետևաբար ամփոփիչ զրույցի համար ընտրված հարցերը պետք է ընդհանրացնող-համակարգող լինեն, որպեսզի երեխաներին մղեն պատասխանելիս նաև որոշակի հետևություններ, մտահանգումներ կատարելու:

Բաժին 3. Քերականության մեթոդիկա

1. Քերականական գիտելիքների յուրացման գործընթացի առանձնահատկությունները տարրական դասարաններում

Քերականական հասկացությունների ուսուցումը տարրական դպրոցում ուսուցչից պահանջում է լուրջ նախապատրաստություն, որովհետև դրանք վերացական են, իսկ կրտսեր դպրոցականների վերացական մտածողությունն անբավարար է զարգացած: Քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում երեխաները սովորում են ա) առանձնացնել բառի մեջ եղած հնչյունները, բ) ընկալել բառի ձևաբանական կառույցը,, նրա յուրաքանչյուր մասի նշանակությունը (արմատ, ածանց, վերջավորություն), գ) գիտակցել բառը՝ որպես ինքնուրույն խոսքային միավոր, դ) ձեռք բերել անհրաժեշտ բառամթերք:

Լեզվական նյութի յուրացումը տարրական դպրոցում աշակերտների համար բարդ է նաև այն պատճառով, որ երեխաները սահմանումը սովորում են ոչ թե լեզվական երևույթն ուսումնասիրելուց, նրա առանձնահատկությունները դիտարկելուց հետո, այլ նախ անգիր են սովորում սահմանումները, ապա՝ գրքում տրված օրինակները վերարտադրում են նույնությամբ, առանց դրանց մեջ խորանալու: Ժամանակակից մեթոդիկան առաջարկում է քերականական նյութի յուրացման ակտիվ, փոխներգործուն, գործնական մեթոդներ, որոնք նպաստում են նյութի յուրացմանը, կիրառմանն ու հետագայում դրանց հիման վրա նոր գիտելիքների ձեռքբերմանը. Այսպիսի մոտեցման պայմաններում քերականության ուսուցումը դառնում է ոչ թե նպատակ, ոչ թե տեսական գիտելիքների սերտման գործընթաց, այլ բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու միջոց:

2. Քերականության տեղն ու դերը հայոց լեզվի տարրական ուսուցման համակարգում

Տարրական դասարաններում հայոց լեզվի ուսումնասիրման նպատակը կրտսեր դպրոցականների բառապաշարի մաքրումն ու հարստացումն է, խոսքի հղկումն է ու զարգացումը, արտահայտվելիք մտքին համարժեք բառեր ընտրելու, դրանք ուղղախոսության կանոններին համապատասխան արտաբերելու, հայերենի ուղղագրությանը համապատասխան գրելու և կապակցված խոսք (բանավոր և գրավոր) կառուցելու կարողության մշակումը: Բնականաբար այս խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է առանց քերականական անհրաժեշտ գիտելիքների իմացության և դրանք խոսքում օգտագործելու համար:

Մայրենի լեզվի քերականության յուրացման նպաստումը նաև աշակերտների ճանաչողական կարողությունների , տրամաբանական մտածողության և լեզվամտածողության զարգացմանը. լեզվական իրողությունների յուրացման գործընթացում երեխաներն իրականացնում են այնպիսի տրամաբանական գործողություններ , ինչպիսիք են վերլուծությունն ու համադրումը , դրանց հիման վրա գտնում են լեզվական երևույթների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանրությունները , կատարում են դատողություններ, փորձում են ընկալել բազմաթիվ վերացական երևույթներ : Այս ամենը զարգացնում է երեխաների մտածողությունը , այդ թվում նաև ՝ վերացական մտածողությունը, որը ճանաչողության բարձրագույն աստիճանն է : Հայոց լեզվի մեթոդիկայի խնդիրն է , մայրենի լեզվի ուսուցումը դարձնել զարգացնող , այնպես կազմակերպել ուսուցումը , որ կոնկրետից վերացականին անցումը դառնա սահուն , ուսումնասիրվող նյութն աշակերտներն իսկապես հասկանան և կիրառեն իրենց խոսքում:

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում ուսուցիչը պիտի որոշի ոչ միայն այն , թե ինչպիսի աշխատանք պիտի կատարեն ինքն ու աշակերտները , այլև այն մեթոդներն ու հնարները , որոնք արդյունավետ են քերականության և ուղղագրության ուսուցման գործընթացում:

Պիտի կարևորել ոչ միայն դիդակտիկ նյութերի ու լեզվական խաղերի դերը , այլև այն, թե ինչ չափաբաժնով և երբ դրանք պետք է օգտագործվեն :

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում պիտի նախատեսել ուսուցումը հետաքրքրաշարժ , ինքնուրույն , ստեղծագործական , երևակայական դարձնող , աշակերտների ակտիվությունը բարձրացնող հնարներ:

2. Լեզվական վարժությունների համակարգը

Որպեսզի լեզվական հասկացությունների ուսումնասիրման գործընթացում ձեռք բերած գիտելիքները սովորողները գիտակցորեն և ճիշտ օգտագործեն , լեզվական գիտելիքների կիրառման ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է իրականացնել շարունակական և նպատակային վարժությունների միջոցով: Լեզվական վարժությունների անկացման գործընթացը պետք է բավարարի մի շարք դիդակտիկական պահանջների .

1. Միևնույն լեզվական իրողության յուրացման նպատակով պետք է կազմակերպել բազմաթիվ և տարատեսակ վարժություններ
2. Վարժությունների կատարումը պետք է կրի շարունակական և համակարգված բնույթ , ինչպես նաև յուրաքանչյուր վարժություն պետք է հիմք նախապատրաստի հաջորդ վարժության կատարման համար
3. Վարժությունների առաջադրանքները պետք է կարդան աշակերտները , բացատրեն մեկնաբանեն և ինքնուրույն պլանավորեն դրանց կատարման քայլերը
4. Վարժությունների կատարման գործընթացում պիտի կարևորվի երեխաների ինքնուրույն գործունեությունը
5. Պիտի ապահովվի վարժությունների տեսակների որոշակի հաջորդականություն
6. Վարժությունների իրականացումը պիտի հենվի երեխաների ունեցած փորձի վրա
7. Վարժությունների բովանդականությունը պետք է համապատասխանի երեխաների տարիքային առանձնահատկություններին, բավարարի նրանց ճանաչողական հետաքրքրությունները , նպաստի երեխաների մտահաղորդակցման կարողությունների ձևավորման և զարգացմանը :

Քերականական վարժություններն իրենց հետապնդած նպատակներով լինում են .

1. Նախապատրաստական վարժություններ , որոնք երեխաներին նախապատրաստում են լեզվական նյութի ուսումնասիրմանը , նպաստում են նրանց լեզվամտածողության զարգացմանը, ձեռք բերած քերականական գիտելիքների ձեռքբերմանը : Այս վարժությունների միջոցով երեխաներն աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն աշխատանքի փորձ :
2. Մարզողական վարժությունները հիմնականում կատարվում են երեխաների կարդացած բնագրերի կամ դրանցից ընտված հատվածների շուրջ: Դրանք իրենց մտքերն արտահայտելու , ընտրելու , ընդգծելու , դասդասելու , ամբողջացնելու , փոխարինելու և նման այլ հանձնարարականներ պարունակող վարժություններ են , որոնք նպաստում են երեխաների ձեռք բերած գիտելիքՄները կարողությունների և հմտությունների վերլուելուն, այսինքն ՝ երեխաները հմտանում են նոր սովորած գիտելիքները ճիշտ և վարժ կեպով կիրառելու մեջ :
3. Վերլուծական վարժությունների միջոցով աշակերտները ձեռք են բերում իրենց ունեցած գիտելիքները վերլուծելու , համակարգելու , վաղօրոք յուրացած , ըմբռնած և նոր ուսումնասիրվող հասկացությունների միջև գոյություն ունեցող ակնառու կապերը տեսնելու կամ նորորը ստեղծելու ունակություններ , նպաստում են վերլուծական – քննադատական մտածողության ձևավորմանը:
4. Կիրառական վարժություններ: Սրանք հիմնականում ձևավորում են ձեռք բերած գիտելիքները գրավոր կամ բանավոր խոսքում նույնությամբ կամ ստեղծագործաբար կիրառելու ունակություն : Այն ինքնաստուգման , ձեռք բերած գիտելիքների կիրառելիության , պիտանիության մեջ համոզվելու մի անփոխարինելի միջոց է :
5. Ստեղծագործական վարժություններ: Վարժությունների այս խումբը աշակերտներին ուղղորդում է սովորած լեզվական իրողությունները , հասկացությունները ստեղծագործաբար կիրառել . ամբողջ աշխատանքը աշակերտները կատարում են ինքնուրույն ՝ կիրառելով նոր յուրացրած լեզվական հասկացությունները : Եթե քերականական վարժություններն իրականացվում են ըստ ձևավորվող գիտելիքների բնույթի , ապա դրանք լինում են հնչյունային, բառակազմական , ձևաբանական և

շարահյուսական , որոնց կատարման ընթացքում աշակերտներից պահանջում են վերլուծելու , հակադրելու , համադրելու, համեմատելու, դասակարգելու, ընդհանրացնելու կարողություններ :

6. Հնչյունային վարժություններ աշակերտները կատարում են ինչպես գրաճանաչության ընթացքում , այնպես էլ գրաճանաչության ավարտից հետո , երբ հնչյուններն սկսում են ուսունասիրել որպես լեզվական հասկացություն, և գրաճանաչության շրջանում հնչյունների մասին նրանց ունեցած գիտելիքները համակարգվում են :
7. Բառակազմական վարժությունների միջոցով ուսուցանվում են բառի կազմության մասին երեխաների ունեցած գիտելիքները և աստիճանաբար վերածվում կարողությունների: Այս վարժությունները ոչ միայն նպաստում են լեզվական գիտելիքների ձեռքբերմանը , դրանց կիրառմանն ու ամրակայմանը, այլև ձևավորում են սովորողների լեզվամտածողությունը, մշակում են վերլուծելու, համադրելու, դասդասելու կարողություններ, որոնք աստիճանաբար նպաստում են բարձրակարգ մտածողության ձևավորմանը:

Գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր.: Զանգակ-97, 2006
2. Տեր-Գրիգորյան Ա.Ե. , Հայոց լեզվի մեթոդիկա: Տարրական դասարաններ: Ուս. ձեռնարկ մանկ. բուհերի համար . – Եր.: Լույս,1980: